HSBC

ԵՐԱՇԽԻՔ N GTEMYT190006

Թողարկման ամսաթիվ 14 հունիսի, 2019թ.

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, որի մասով բենեֆիցիար է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Զանգակ-97» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվող թիվ «ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/25» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 267,993,840.00 (ՀՀ դրամ երկու հարյուր վաթսունյոթ միլիոն ինը հարյուր ինսուներեք հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված 900005028106 բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 2019թ.-ի հունիսի 14-ից մինչև 2019թ.-ի հոկտեմբերի 01-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) Թիվ «ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/25» կնքված պայմանագրի պատճենը:
2) Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման վերաբերյալ եզրակացություն:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթերը, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն

HSBC

իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթերը, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05%-ի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքը կարգավորվում է 2010թ. վերանայված ԱՄՊ թիվ 758 հրատարակության Ցպահանջ Երաշխիքների Միասնականացված Կանոններով այնքանով, որքանով դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ անունից

Հարգանքներով՝

Արտակ Պետրոսյան

Առևտրի Ֆինանսավորման Բաժնի կառավարիչ

Մարտին Մարտիրոսյան

Կորպորատիվ Բիզնեսի Գծով Տնօրեն

HSBC BANK ARMENIA CLOSED J-S COMPANY 1302514855 № 1

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66
Հեռ.՝ +374 60 655 000 Ֆաքս՝ +374 60 655 501 Կայք՝ www.hsbc.am

"HSBC Bank Armenia" CJSC
66 Teryan Street, Yerevan, 0009, Republic of Armenia
Tel: +374 60 655 000 Fax: +374 60 655 501 Web: www.hsbc.am

Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում
Գրանցման համար 67

Registered in the Republic of Armenia
Registered number 67